ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

--- 2026 թվականի №-- -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 19-Ի №273-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը ***որոշում է***.

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2020 թվականի օգոստոսի 19-ի «Հանրային կազմակերպությունների ցանկը հաստատելու, այդ կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ պահանջները, դրանց մոնիթորինգի և հաշվետվությունների ներկայացման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» №273-Ա որոշման 2-րդ կետով սահմանված №2 հավելվածում՝ հանրային կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ պահանջներում (այսուհետ՝ Պահանջներ) կատարել հետևյալ լրացումները.
   1) Պահանջների 6-րդ կետում «նաև այդ համակարգում» բառերից հետո լրացնել «հնարավորության դեպքում» բառերը,
   2) Պահանջների №1 հավելվածի 2-րդ կետում «Համակարգերը» բառից հետո լրացնել «, բացառությամբ սույն հավելվածի 3-րդ կետով սահմանված դեպքերի,», բառերը,

3) Պահանջների №1 հավելվածը լրացնել 3-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«3. Սույն հավելվածի 2-րդ կետի 8-րդ, 9-րդ և 12-րդ ենթակետերով սահմանված հնարավորությունների բացակայության դեպքում հանրային կազմակերպությունը ապահովում է դրանց հասանելիությունը «Գնումների մասին» օրենքով նախատեսված հրապարակման ենթակա տեղեկատվության հրապարակման նպատակով գործող ինտերնետային կայքի (procurement.am) միջոցով՝ այդ մասին նշում անելով մրցակցային ընթացակարգով գնման գործընթացի կազմակերպման մասին հայտարարության մեջ: Ընդ որում՝ պահանջվող տեղեկատվության հասանելիությունը տեղեկագրում պետք է ապահովվի հայտերի բացման օրը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ**

ք. Երևան
2026թ.